«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հուլիսի 2016 թվականի

«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Գյումրու մասնաճյուղում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Գյումրու մասնաճյուղում»** հարցը (զեկուցող՝ Գյումրու մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա.Դավոյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. հաշվետու ժամանակաշրջանում տնօրինությունը, ուսումնական բաժինը և ամբիոնները հետևողական աշխատանք են կատարել ուսումնական գործընթացի կազմակերպման, կատարելագործման և քննաշրջանները կազմակերպված անցկացնելու ուղղությամբ: Մասնաճյուղում ուսումնական քննական գործընթացը կազմակերպվել է գործող կարգերին և գիտական խորհրդի որոշումներին համապատասխան:

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի գիտական խորհրդի նիստերում լսվել և քննարկվել են ուսումնական, գիտական, դաստիարակչական, կարգապահական և կազմակերպական բազմաբնույթ հարցեր: Առաջ են քաշվել կրեդիտային համակարգի կիրառման գործնական արդյունավետության բարձրացման հիմնահարցեր:

Դրական տեղաշարժեր են կատարվել ուսումնական գործընթացի կազմակերպման ասպարեզում: Ամբիոններում հաճախակի կատարվել են քննարկումներ ուսման որակի բարձրացման և ուսանողների հետ կատարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների ուղղությամբ:

2015-2016 ուստարում մասնաճյուղում աշխատում են 51 դասախոս, որից 5-ը՝ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 15-ը՝ գիտությունների թեկնածու, դոցենտ, 10-ը՝ գիտությունների թեկնածու, այսինքն՝ պրոֆեսորադասախոսական կազմի 60 տոկոսն ունեն գիտական աստիճան և գիտական կոչում:

Արձանագրելով դրական տեղաշարժերը, խորհուրդը, միաժամանակ, նշում է՝ դեռևս կան թերություններ և չլուծված խնդիրներ.

1. Ուսանողների դասահաճախումների վերահսկողության գործընթացում:
2. Դեռևս չի հաջողվում ամբողջապես բացառել կարգապահական խախտումները և դասաձախողումները:
3. Ուսանողների ակտիվության գնահատման աշխատանքներում:
4. Փորձառությունների կազմակերպման անցկացման, վերահսկողության և գնահատման գործընթացում:
5. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության, աշխատանքի ղեկավարման, կատարման, գրախոսման և պաշտպանության գործընթացներում:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Մասնաճյուղի 2015-2016 ուսումնական տարվա ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել ամբիոններին՝**
   1) վերահսկողություն սահմանել ամբիոններում դասախոս կադրերի ընտրության գործընթացի վրա՝ նպաստելով, որպեսզի բուհում դասավանդեն բարեխիղճ, բարձր մասնագիտական որակներով օժտված, ակտիվ գիտական գործունեություն կատարող, դրական հատկանիշներով առանձնացող բարեկիրթ դասախոսներ.
   2) դասախոսությունները, սեմինար և գործնական պարապմունքները անցկացնել արդյունավետ մեթոդներով՝ ժամանակակից պահանջներին համապատասխան.
   3) հատուկ ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների թեմատիկայի նորացմանը, իսկ դրանց պաշտպանությունները կազմակերպել միայն էլեկտրոնային հավելվածների ներկայացմամբ.
   4) փորձառության վայրերը հնարավորության սահմաններում համապատասխանեցնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմատիկային.
   5) ամբիոնները համալրել բարձր որակավորում ունեցող համապատասխան դասախոսներով:
   6) խիստ պատասխանատվությամբ առաջնորդվել դասաբաշխումներն իրականացնելիս: Հատկապես մեծ ուշադրություն դարձնել մագիստրատուրայում դասավանդողներին ներկայացվող պահանջներին: Ընդգրկել միայն մասնագիտական փորձ, գիտական աստիճան ու գիտական կոչում ունեցող դասախոսներին.
   7) բացառել պարբերաբար դասաձախողումներ թույլ տված դասախոսների ներգրավումը դասավանդման գործընթացում:

3. **Հանձնարարել մասնաճյուղի տնօրենին՝**
   1) մասնաճյուղի գիտական խորհրդի նիստերում քննարկել և ընդունել մայր բուհի գիտական խորհրդի նիստերի որոշումները,
   2) մասնաճյուղի գիտական խորհրդի նիստերում պարբերաբար քննարկել կրեդիտային համակարգի կիրառման և կատարելագործման հետ կապված հիմնահարցերը և առաջարկությունները ներկայացնել մայր բուհ.
   3) ակտիվացնել և ավելի նպատակային դարձնել գիտահետազոտական աշխատանքները և պարբերաբար հաշվետվություններ ներկայացնել ՀՊՏՀ.

4) ամենօրյա հսկողություն իրականացնել կատարողական կարգապահության, ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ. խախտման պարբերաբար կրկնվող դեպքերը դարձնել քննարկման առարկա.
5) հաշվի առնելով ՀՀ կառավարության կադրերի ռացիոնալացման քաղաքականության պահանջները, մասնաճյուղի դիմորդների թվի զգալի կրճատումը, սոցիալական ու ֆինանսական իրավիճակը՝ անհրաժեշտություն է առաջացել ռացիոնալացնելու հաստիքացուցակը: Մինչև մասնաճյուղի նոր ռազմավարական ծրագրի մշակումը, ներկայացումը և հաստատումը, փոխտնօրենի հաստիքը լուծարել՝ նրա գործառույթները փոխանցելով ֆակուլտետի դեկանին:

4. Հանձնարարել ՀՊՏՀ ռեկտորատին՝

1) ՀՊՏՀ-ում լույս տեսնող դասագրքերից և ուսումնական ձեռնարկներից 5-ական օրինակ տրամադրել մասնաճյուղին, ինչպես նաև կազմակերպել խորհրդատվություններ մասնաճյուղի դասախոսների համար.
2) աջակցել մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի սերնդափոխության գործընթացին՝ ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի միջոցով պատրաստելով համապատասխան կադրեր.
3) գործուն աջակցություն ցուցաբերել մասնաճյուղի ուսանողների ուսումնաարտադրական և գիտահետազոտական փորձառությունների անցկացման գործընթացին.
4) ՀՊՏՀ ուսումնամեթոդական խորհրդի կազմում ներգրավել մասնաճյուղի ներկայացուցիչ:

5. Սույն որոշումը քննարկել մասնաճյուղի գիտական խորհրդի և ամբիոնների նիստերում ու ձեռնարկել գործուն միջոցառումներ՝ նշված հանձնարարականները կենսագործելու համար:

6. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին և Գ.Ի.Վարդանյանին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

01.07.2016 թ.